№ 219 Դեկտեմբերի 9 (21) 1880 Դեկտեմբերի 9 (21) № 219

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թուին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրօգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եղբայրը եղբօրը չը ճանաչեց—Ներքին տեսութիւն. Նամակ Ցարիցինից. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Անգլիա. Նամակ Թիւրքիայից.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական. Անկիւնի բնակը.

ԵՂԲԱՅՐԸ ԵՂԲՕՐԸ ՉԸ ՃԱՆԱՉԵՑ

—

Քանի մի ամիս է արդէն որ հայոց լուսաւորչական մամուլը կոչում գոռում է որ հայ-բողոքականները և հայ-կաթոլիկները հայեր չեն, որ հայ դառնալու համար նրանք անպատճառ պէտք է վերադառնան լուսաւորչական եկեղեցու գիրկը, որ լուսաւորչական եկեղեցուց դուրս չը կայ հայ ազգութիւն և այլն....

Յանկարծ Գերմանիայում յայտնվում է հակահրէական շարժումը, մի հրէշաւոր, յետադէմ, ամօթալի, միջնադարեան շարժում, որ նպատակ ունի սահմանափակել հրէայ համաքաղաքացիների իրաւունքները միայն այն պատճառով, որ այդ գերմանացի քաղաքացիները չեն պատկանում Գերմանիայում տիրապետող աւետարանական եկեղեցուն, այլ պատկանում են մովսիսական կրօնին: Ի հարկէ այդ շարժումը կրօնական մոլեռանդութիւնից դրդված իրան չը ցոյց տալու համար, ծածկվում է տնտեսական պատճառների դիմակի տակ....

Բայց բաւական է ուշադրութիւն դարձնել Բեռլինի պալատական քարոզիչ Շտէօկկերի դատողութիւնների վրա, բաւական է կարդալ Բիսմարկի օրգան „Grenzboten" ամսագրի վերջին յօդուածը հրէական խնդրի վերաբերութեամբ այն ճշմարտութեան մէջ համոզվելու համար, որ տնտեսական պատճառները առիթ էին միայն, իսկ բուն պատճառը հակահրէական շարժման Գերմանիայում նոյն մոլեռանդութիւնն ու խաւարամտութիւնն էր, որ և մեզ մօտ առաջնորդում էր մեր ապուշ մամուլը իր արշաւանքի մէջ մեր այլակրօն եղբայրների դէմ:

Երեւոյթները համանման են. տիրապետող կրօնը, ճանաչելով իրան միակ արտայայտիչ ազգային գաղափարի, այն մարդկանց միայն ճանաչում է ազգութեան պատկանող անդամներ, որոնք պատկանում են տիրապետող կրօնին:

Շտէօկկեր և Բիսմարկի լրագիրը բացարձակ յայտնում են. Գերմանիան բողոքական մի պետութիւն է և գերմանական ազգութիւնը մի զօրեղ քաղաքական մարմին, մի ամբողջութիւն կազմելու համար պէտք է ամբողջութեամբ բաղկացած լինի մի կրօնին, այն է տիրապետող կրօնին պատկանող անհատներից....

Հրէան երբէք բուն գերմանացի չի դառնայ, մինչև որ չը թողնի մովսիսականութիւնը ու չը մտնի աւետարանականութեան մէջ: Գերմանիան աւետարանական մի պետութիւն է, „ein evangelischer Staat" աղաղակում են գերմանացի ապուշները....

Նոյնը աղաղակում էին և մեր ապուշները: Հայը միայն լուսաւորչական կարող է լինել: Սպասելի էր, ուրեմն, որ մեր ապուշները պէտք է ուրախանային որ նրանց պէս իդիոտներ ու անազնիւներ, նրանց պէս խաւարարներ ու խաւարասէրներ գտնվեցան և լուսաւորված Գերմանիայում, պէտք է ուրախանային որ Շտէօկկերի պէս նշանաւոր քարոզիչները նրանց պէս են մտածում ու դատում...

Այս պահանջում էր լօգիկա, յաջորդաբար մտածելու անհրաժեշտութիւնը.... Մենք համոզված էինք, որ մեր խաւարասէրները պէտք է համակրէին գերմանացի խաւարասէրներին, պէտք է համակրէին Գերմանիայի հակահրէական շարժմանը: Բայց որքան մեծ էր մեր զարմանքը, երբ „Մեղու Հայաստանի" լրագրի № 93 մէջ կարդացինք մի առաջնորդող յօդուած սաստիկ յարձակումներով լի գերմանացի հրէամոլների և Շտէօկկեր քարոզչի դէմ...

Մեր խաւարասէրները չը ճանաչեցին իրանց հարազատ եղբայրներին, Շտէօկկերի ու Տրէյչկէի պէս անազնիւ մոլեռանդներին: Նրանք, որպէս գերմանացիներ, պահանջում են որ իւրաքանչիւր գերմանացի, իրան գերմանացի կոչելու իրաւունք ունենալու համար անպատճառ հրաժարվի իր բոլոր անձնական կրօնական համոզմունքներից և անպատճառ աւետարանականութիւնն ընդունի,—դուք էլ, հայ լինելով, պահանջում էք որ ամեն հայ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԿԻՒՆԻ ԲՆԱԿԸ

—

Մի անկիւն, մի կուրուսեալ փողոցի մէջ: Դրսումը ձմեռ, ներսումը վաղուեան պարէնի հոգը: Այդ ցուրտը նուազ խիստ չէ զրկանքէն: Բայց ով բարեկեցութեան մէջ է, կարող չէ ըզգալ թէ որքան տանջող է վաղվա հաց չունենալու միտքը և ուրիշին ձեռք երկնցնելու խիստ հարկը: Դողդոջ ծերունին, իր դաւազանի վրա յեց, և ողորմուկ մանկիկը, իր պատառոտուն չորերի մէջ, մուրանում են: Բաղդի այդ որբերը, իրենց ճանապարհի վրա, մէկը իր կեանքի մեծ անապատի մէջ, միւսը իր օրրանի չուրջ, Անձնասիրութեան և հպարտութեան երեսը չեն տեսել, չեն ճանաչում:

Քամին փչում է: Ներսում կրակը սակաւիկ, յաղթվում է ցուրտ տարրի հետ արած կռուի մէջ: Մի երիտասարդ, սրունները մինչև մէջքը մի սաւէ վերմակի մէջ փաթաթած, նստած է սեղանի առջև: Ձախ ձեռն արմուկովը կուրծքի առջև սեղանի վրա դրած, գլուխը թղթի վրա խոնարհած, գրիչը աջու ձեռի բոյթ մատի և միջնամատի մէջ և ցուցամատը բերնին՝ մտածում է: Ինքը նոյնից է, որոնք՝ իրենց յափշտակութեան բաղձներին՝ գրիչն ընտրեցին իրենց արհեստ:

Տակաւին մանկահաս, ուղարկել են նորան մեծ քաղաքներում ուսում առնելու: Գիշերօթիկ աշակերտ, հեռու՝ աշխարհէն և նորա պահանջներէն, նիւթապէս ապրելուն վրա բոլորովին անհոգ՝ ամենայն ինչ պատրաստ վայելելով, միայն մի բանի վրա է մտածել—ուսանել—:

Ուսուցել են նորան ամեն բանից մի փոքր, բայց տուել են նորան աւելին ուսանելու սէրը, և պատանին կարդացել է, իր առաջնորդները, նախապատւութեամբ, աւելի գեղեցիկ դպրութեանց ճաշակը տուել են նրան: Հայրենասիրութիւն, մարդկային բարօրութիւն, ազատութիւն, այդ ազնիւ գաղափարներով են սնուցել նրա հոգին, սիրոյ ու միտքը այն մեծ մարդիկը՝ որոնք հնումն ու նորումս, ամեն ժամանակ, երգել են այդ առաքինութիւնները:

Այդպէս պատրաստուած և, երբ բեռ, ունենալով միայն իր քնարն ուսէն կախ, յետ է դարձել պատանին իր հայրենիքը: Տեմնում է ամեն բան անապատ և աւեր: Երգել գիտէ: Արևակէզ հողի վրա և խաւեալ ցարասների մէջ նստած երգում է հայրենիքի սուգը:

Սպասում է, բոլորովին միակ է, երգում է, դարձեալ աւելի սրտառուչ ձայնով: Իր երգի կրկնութիւնը կիսափուլ մատուռի պատերի մէջ զետեղուած ծափերն են անում, որոնց մէջ այժմ, փոխանակ մեղեդիների և սաղմոսների գեղգեղուելուն, դաշտի մեղուներն են բզզին հանում:

Վեր է կենում, մտնում է մերձակայ աւանը, գամփռները վրա են թափվում, ազատվելու ուրիշ ճար չը գտնելով նստում է: Զրուցասիրութեան համար տանիքների վրա խմբուած աւանականները պիշ աչքով նայում են այլատարազ անսովոր երգչի վրա: Ճանաչվելու համար, երգում է հայրենիքի կսկիծ լեզուով: Երգում է, նոցա ականջում, փառաւոր անցեալը, սգաւոր ներկան: Սիրտն ուռչում է, լցվում է. աչերն արտասուքի միջով նշոյլ են արձակում: Երգում է հայրենի գետակն ու դաշտը, ակօսաբեկ [illegible], գարեանդների վրա թափառ գնացող փոքրիկ հօտը. երգում է հայրենիքի խաղերը, քաջագործի պատմութիւնները, գեղամէջք օրիորդները: Երգում է...

Նորան չեն հասկանում:

Նորան չեն հիւրընկալում:

—Աստուած իմ, ինձ չեն հասկանում, ինձ չեն ճանաչում—:

Այս խօսքերի վրա, սիրտը կըբտուած, աչքն արտասուքով մթնոտած, քաշում է գառակն յօնքերին, դարձնում երեսը՝ գնում է: Շներն ուղարկում են նորան իրենց հաչիւններով: Երեկոյ լինելով հեռանում, աչքից աներևոյթ է լինում վրա հասնող մթան մէջ:

Տգիտութիւն, անհեռատեսութիւն: Մարդիկ ուղարկում են իրենց որդիներն օտար աշխարհ, օտար տեղ, ուսում առնելու համար, և կարծում են թէ այդպէս բաղդաւոր կանեն նոցա նիւթապէս:

Ուսման մէջ ուր են գտնում նոքա իրենց սրտոց բաղդաւորութիւնը. կարդալու՝ անշուշտ՝ գրելու, հաշուելու, մարդավարի նստուկացի և այլոց առջև պատիւ գտնելու մէջ:

Դոցա գաղափարած մարդը նման է անշուշտ իրենց ուսեալ տիրացուին, տէրտէրին, վարդապետին, գուցէ մի փոքր էլ աւելի. կամ՝ իրենց տեսած գաւառապետին, սպային, գնդապետին՝ և դէպի վեր. այս վերջիններիս էլ՝ խօսք չը կայ, նշաններիցն են չլացած:

Արդ, երբ յետ է դառնում որդին, էլ չեն ճանաչում նորան, չեն հասկանում. կարդում է, ոչ սրբոց վարք. գրում է, ոչ սրբոց վրա տաղ. հաշւում է, ոչ իրենց պէս. իսկ նորա մարդավարի նիստ ու կացը, ոչ լոքիս ուտելն ու ծառայական խոնարհութիւնն է, և ոչ էլ այլոց առջև անպատճառ լուսաւորչական լինի։ Ի՞նչի մէջն է, ուրեմն, զանազանութիւնը, ի՞նչ իրաւունքով յարձակվում էք ձեր հարազատ եղբօր Շտէօկկէրի դէմ, որքան լըրութիւն, անամօթութիւն ձեր կողմից որ այն, ինչ որ դուք լաւ էք համարում ձեզ մօտ, այսինքն բռնութիւն խղճի և կրօնական համոզմունքի վրա, դուք պախարակելի էք համարում Գերմանիայում...

Բայց բանը պարզվում է շատ հասարակ կերպով։ Տանը, մանաւանդ ,,Մշակին'' a tout prix հակառակելու համար, կարելի է լինել բռնաւոր, յետադէմ, ապուշ, իդիօտ, կինտօ, անհամբերող, տըգէտ, մոլեռանդ, ջիմար, — իսկ դուրսը, մանաւանդ լուսաւորված Գերմանիայի վերաբերութեամբ, պէտք է ցոյց տալ իրան աւելի բարձր, պէտք է երևալ եւրօպացի, ազնիւ, ազատամիտ...

Ինչպէս զրկել իրան մի եւրօպական երկիր, Գերմանիա խըստութեամբ քննադատելու և հայ հասարակութեան աչքին թող փչելու զուարճութիւնից....

Ահա ձեզ ազգային մամուլ, ահա ձեզ հասարակական կարծիքի լրբ և անամօթ առաջնորդներ, որոնց նպատակն է միայն ջանալ մոլորեցնել ժողովրդի առողջ դատողութիւնը։

Խոստովանվում ենք. այդ աստիճան անամօթութիւն, այդ աստիճան լրբութիւն մենք չէինք սպասում մինչև անգամ մեր կապիկ պամպուլներից։

Շարունակեցէք, շարունակեցէք, պարոններ, լրբացնել հասարակութիւնը, դուք անշուշտ կը հնձէք այն, ինչ որ ցանել էք, դուք նոյնը կանէք, ինչ որ տարիներով արել է մամուլի անբարոյական մասը Գերմանիայում.... դուք կառաջացնէք մի խաւար, մոլեռանդ, թարմութենից և առողջ դատողութենից սպառված, մի և նոյն ժամանակ լրբ, յանդուգն, ինքնահաւանութեամբ ամեն նոր միտք ցեխի մէջ ոտնակոխ անող մի սերունդ, խեղդված իր սեփական կեղտի մէջ, որ անկարող լինելով իր այդ կեղտից բարձրանալ, մի դժոխային թշնամութիւն կը զգայ դէպի ամեն բան, որ նրանից բարձր ու մաքուր է, կաշխատի այն ամենը որ նրանից վեր է խրել այն կեղտի մէջ, որի մէջ նա ինքն թաւալվում է....

Ի՞նչ էք զարմանում որ տարիներով իր չորս կողմը խաւարը տարածելով, գերմանական մամուլի անբարոյական մասը կրթել և պատրաստել է Տրէյչկէի և Շտէօկկէրի պէս անբարոյական, անազնիւ, մոլեռանդ, իրանց համաքաղաքացիների մէջ երկպառակութիւն գցող մարդիկ։ Նոյնը և դուք էք անում, այն զանազանութեամբ որ ձեր ազդեցութեամբ պատրաստածները չեն լինի Տրէյչկէի և Շտէօկկէրի պէս տաղանդաւոր մարդիկ, այլ լինելով նոյնքան խաւարամիտ, նոյնքան մոլեռանդ, նոյնքան անբարոյական, նոյնքան անազնիւ, նոյնքան երկպառակութիւն սերմանող, որքան և նրանք, կը լինեն նրանցից շատ աւելի ստոր ընդունակութիւնների տէր մարդիկ....

Այս րոպէիս Գերմանիան գտնվում է կատարեալ յետադիմութեան մէջ, շնորհով իր խաւարասէր մտաւոր առաջնորդների։

Նոյնը և մեզ է սպասում, շնորհով մեր անբարոյականացնող մամուլի։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՑԱՐԻՑԻՆԻՑ

—

Նոյեմբերի 25-ից

Կրկին Ցարիցինի մէջ հայերը և մի քանի այլազգիներ պ. Կրասիլնիկեանցի յորդորանօք ժողովեցին ստորագրութեամբ երեք նպատակի գումարներ, որոնցից մէկը 177 րուբլի—«փարիզի Հայկազեան ուսումնասիրաց ընկերութեան» համար, երկրորդը—185 րուբլի Ղուրայի Քիլվար գիւղի մէջ կառուցանվելիք եկեղեցու և դպրանոցի տաճկաբարբառ հայերի համար և երրորդը—403 րուբլի Վանի սովեալների և հիւանդանոցի համար։ Առաջինը յանձնված է պ. Կրասիլնիկովին, երկրորդը պ. Յովակիմ Ազամեանցին հասցնելու ուր հարկն է, իսկ վերջինը այս նամակիս ծոցի մէջ մէկ հատ բանկային փոխադրական տոմսակ 403 րուբլու ուղարկում եմ խմբագրատունդ և խոնարհաբար խնդրում եմ հասցնէք ուր հարկն է և ստորագրող անձանց անունները խնդրեմ պատուական լրագրիդ միջոցաւ հրատարակէք ի գիտութիւն ամենեցունց։

Յովհակիմ Սահակեան Ազամեանց 20 ր., Առաքել Գոլմանեանց 15 ր., Եղիազար Մաղաւզեանց 25 ր., Խաչատուր Ղազարեանց 10 ր., Զախար Յարութինեան Կրասիլնիկեանց 20 ր., Եղբայրք Յապաեանց 5 ր., Աղասի Ջախմախսազեանց 10 ր., Գրիգոր Վլասեանց 3 ր., Գրիգոր Ալաջալեանց 5 ր., Թէոդորոս Եաղուբեանց 5 ր., Заркаровъ 2 р., Տէր-Մատթէոսով 2 ր., Антонъ Ивановичъ Марченко 50 р., Նիկողայ Գրիգորեան Ղուլեանց 10 ր., Երեմեայ Լազարեանց 5 ր., Գրիգոր Ղարակէօեանց 5 ր., Բաղտասար Սարգսեանց 50 ր., Մնացական Մուսկարեանց 4 ր., Ջհանգիր Բաղիրեանց 1 ր., Անյայտ ոմն 4 ր., Միխայիլ Բունեաթեանց 3 ր., Апельсонъ 2 р., Райкинъ 1 р., Извильскій 1 р., Սիմոն Բացով 7 ր., Ратнеръ 3 р., Перлманъ 1 р., Петрушкинъ 1 р., Նիկողայ Յակովբեան Կիստեանց 10 ր., Մ. Ս. 10 ր., Սարգիս Տէր-Միքայէլեանց 3 ր., Եգոռ Քալանթարեանց 10 ր., Ն. Ս. Սափարեանց 15 ր., Гугель 5 р., Սարգիս Աղայեան Եղիազարեանց 20 ր., Գրիգոր Մարտինեան Առաքելեանց 20 ր., Յարութիւն Գիլանցով 8 ր., Աւագ Թումայեանց 2 ր., Կարապետ Կոլաբեւով 5 ր., Աղաբաբեանց 5 ր., փողի տոկոս 5 ր., Տօնախմբութեան փոխարէն 13 ր., պ. պ. Բունիաթեանից և Քալանթարեանից։ Գումարն է 403 ր.։

Ա. Ջախմախսազեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 27-ին Նոյեմբերի

«Մշակ» լրագրիդ մէջ մի լուր կարդացի, որպէս թէ Կարապետ վարժ. Բեհլուլեանցի և Օրբէլ Օրբէլեանցի մասնաւոր ուսումնարանի ներքին կազմակերպութեան և գոյութեան պահպանութեան վրա Թիֆլիսեցի մի երիտասարդ մի բրօշիւրա է պատրաստել և դրանով նա ուզում է բաց անել մի քանի կոյր աչքեր....

Մենք չը գիտենք, թէ ժամանակումս ո՞ւմ աչքերն են կոյր, որ պարոնը բարեհաճում է բաց անել, այնու ամենայնիւ կամենում ենք մի նկատողութիւն անել, ինչպէս քաջածանօթ յիշեալ ուսումնարանին։

Երիտասարդ պարոնը գուցէ հետաքրքրված չը լինէր ուսումնարանի անցեալով և նրա գործունէութիւնով, ուստի, նրան առաջարկում ենք հետևեալ նիւթերը, որ դրանց նա տեղ շնորհէր իր բրօշիւրի մէջ, եթէ կարելի է։

Յիշեալ ուսումնարանը երեսուն և հինգ տարի է, որ գոյութիւն ունի Թիֆլիսում։

Այդքան ժամանակամիջոցում նա ծառայել է Թիֆլիսին և տուել է միշտ մայրենի լեզուով կրթված մանուկներ, այդ էլ այն միջոցներում երբ քաղաքս վրացախօսութեան մէջ ընկղմված էր։

Նա իւրաքանչիւր տարի արքունական դպրոցներին նոյնպէս տուել է պատրաստի աշակերտներ 10—20։

Նա պահպանում է իւրաքանչիւր տարի ձրիավարժ 8—10 որբ աշակերտ։

Նա իր գոյութիւնը պահպանել է շատ անգամ պարտքի մէջ։

Ուսումնարանի պահպանողը շատ անգամ բերանացի ու գրաւոր շնորհակալութիւն է ստացել այցելողներից։

Բէհլուլեանցի թէ միջնորդութիւնով և թէ դրամական օժանդակութիւնով շատ անգամ անապահով ուսանողներ գնացած են Ռուսաստան և արտասահման շարունակելու ուսումն և գըլխաւորապէս Լազարեան ճեմարան։

Ն. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ս. Պետերբուրգ, 22 Նոյեմբերի

Խոնարհաբար կը խնդրեմ տեղ շնորհել իմ երկտող նամակիս ձեր պատուական «Մշակի» էջերում։

Կարդացի «Մեղուի» № 87-ում իմ դէմ ուղղած առաջնորդող յօդուածը, որի հեղինակը, ինչպէս ակներև է նրա ոճից, ինքն այնոր ծերունի պ. Սիմէօնեանցն է։

«Մշակի» № 194-ում ակնարկելով «Մեղուի» չափազանց յարձակողական դիրքի վրա իր պաշտօնակցի վերաբերութեամբ, ես կողմնակի կերպով կամենում էի հարկադրել «Մեղուին» հրապարակօրէն յայտնել վերջապէս, կան արդեօք այնպիսի ազգային, հասարակական և կամ գրականական հարցեր, որոնց որոշելու անհրաժեշտութիւնը «Մեղուն» էլ այնքան ըմբռնէր, որքան «Մշակը», և թէ ինչ հանգամանքներից դրդված «Մշակի» իւրաքանչիւր նոր առաջարկութեան դէմ, «Մեղուն» անդադար դնում է իր անպայման veto-ն։

Հոգւով չափ ուրախ եմ, որ ինձ յաջողեցաւ կորզել «Մեղուից» հետևեալ խոստովանութիւնները թէ՝

Նախ՝ «Մեղուն» երբէք յարձակված չէ «Մշակի» խղճի և կրօնի ազատութիւն պահանջելու դէմ.

բ. «Մեղուն» երբէք ցանկացած չէ և չէ ցանկանում ոչ «Մշակի» և ոչ որ և է հրատարակութեան խափանումն.

գ. «Մեղուն» մրցման վրա («Մշակի» հետ) մտածած չէ (sic?). կարծես նրան արգելում են մրցելու. զարմանալի պարկեշտութիւն։

Պատուելի ծերունի, պ. Սիմէօնեանց, հրաւիրում եմ ձեզ այս երեք կէտերը անմոռաց դրօշմել ձեր յիշողութեան մէջ և իրօք ճշգիւ կատարել. իսկ ինչ որ վերաբերվում է ձեր ինձ ան-

---

պատիւ գտնելը՝ նոցա պէս փայլուն երևալն ու գոռոզաբար հրամայելն է։

Արդ այդ որդին մերժվում է, այլ ևս իւր հօր տանից չէ, էլ չեն ճանաչում նորան իւր գաւառում. չունի օթևան. յանձնվելով կոյր բաղդին՝ ընկնում է մութ գիշերի գիրկը. ու՞ր պիտի հանէ նորան իւր ճակտի գիրը, ո՞վ գիտէ։

Գնում է, յոյսն ու յուսահատութիւնը սրտում,

Դաշտի մարդը նորան չը հասկացաւ. գուցէ շահաստանինը հասկանայ։

Աւելի կասկածէն կրծված ու մաշված, քան քաղցէն ու յոգնածութենէն, պատանին հասնում է մի շահաստան։ Տեսնելով մեծակառոյց և գեղաշէն ապարանքները, մրգենիներով ճոխ և վարդենիներով զարդարված պարտէզները, տնու փառաւոր կառքերը ամեհի երիվարներով լծված,—որոնց մէջ նստած նազենի տիկնայք, մինչ իրենց անիւները դղորդաձայն գլորում են լայնարձակ փողոցներով ու շուկաներով, անցորդի աչքում շողշողեցնում են իրենց ականակուռ ապարօշները, ասես ձուլածոյ պարանոցի վրա գոհարները, ճախարակված թևերի վրա ոսկի ապարանջանները, գեղաշխիտ մատների վրա ադամանդն ու զմրուխտն ու եաղութը, մետաքսն ու թաւիշը դրկում են սիրուն մէջքերը և փարուում են ուռուցիկ կուրծքերի վրա, նոցա կողքին կամ հանդէպը նստած ասպետները, գիշերի նման սև մահուդէ զգեստի և շուշի պէս սպիտակ կտաւէ շապկի մէջ, մրցում են ասես այդքան պարզութեամբ այնքան բազմազան պերճանքի դէմ,—տեսնելով այդքան շքեղ հանդէս՝ յոյսը զօրացաւ պատանու ծոցում։

—Այստեղ երգել կարելի է—ասաց ինքն իրեն. —վկայ են ինձ այն սիրունիկ վանդակների մէջ փայփայված դեղձանիկները, վկայ են սէրն երգող սոխակները։ Ես կերգեմ հայրենիքի սուգը. ինձ օթևան կուտան։—

Եւ երգեց պատանին։

—Ո՞վ է մեր լուսամուտների տակ, որ մեր հանգիստը վրդովում է —մի այրական ձայն՝ եկաւ ապարանքի խորէն։

Պատանին ապուշ կտրած և սարսուռն երակների մէջ, վեր նայեց անգամ մի։ Մի սիրուն գլուխ, արևի նման սիրուն, ժպտում էր վերէն. բայց ոչ մի բառ, ոչ մի ակնարկ, ոչ մի յուսադրութեան նշան, որ լռած ձայնի բերած խստութիւնը փոքր մի գոնէ մեղմացնէր։ Նազելի տիկինը, այդ առաւօտեան ցօղով նշոյլտող վարդի գեղեցկութեան հետ կռւող երեսը, այն որ փետրալից բաստեռների վրա, գիշերվայ կախարդութեան ծոցում, մի բովանդակ Եդեմ է, նազելի տիկինը անկարեկիր մնաց տարաբաղդիկ պատանու։

Եւ պատանին, աչերը գեղեցիկ՝ որպէս անուշ լոյսը իրենց ջինջ հայելու վրա խաղացնող լճեր, մազերը խարտեաշ և ուսերի վրա խոպոպիկ իջած. ճակատը լայն և երկինք այնտեղ դրոշմված, պատանին, որի դալուկ դէմքի վրա հոգին է նստած վհատ ու տխուր, սիրտն յուզմունքի ծով, դարձնում է երեսը ապարանքէն՝ մրմնջելով։

—Աստուած իմ, որքան երբեմն խաբող է դրսի երևոյթը։—

Հազիւ թէ յետ է դառնում, որ ահա մէկն յանկարծ օձիքէն բռնելով—Ա՛հ, դու եկել ես այստեղ, մեր քաղաքը, երգելու.... և այն՝ առանց մեր կամքն ու հովանին խնդրելու. իմացիր, յանդուգն պատանի, որ մենք կը հրապարակենք թէ դու ոչինչ չը գիտես, և որ մենք հերիք ենք այստեղ երգողներս, և որ դու այստեղ պիտի չերգես. գնա՛ որտեղից եկել ես։

Պէտք կա՞ր այդքանն ասելու և սպառնալու, մինչ պատանին մերժվում էր ապարանքէն։

Ուրիշ տեղ նա տեսել էր Տգիտութիւնը, այդտեղ տեսաւ նաև Անտարբերութիւնը, մոլի Շահասիրութիւնը և սև Նախանձը։

Գնաց մտախոհ, բայց դուրս չը գնաց շահաստանէն։

Այնտեղ է. Մի հզօր որոշման րոպէում երդուեց, երկնքի հաստատութեան առջև, իւր կրած դառն մերժման վրէժն հանել. փարատել Տգիտութիւնը, տարամերժել Անտարբերութիւնը, արտահալածել սև Նախանձը։

Այդ օրից ի վեր նա ապաւինեցաւ առանձնութեան գիրկը, Լռութիւնն ու Մտածութիւնը ընկեր ընտրելով։ Սկսաւ իւր միտքը թղթին աւանդել, պատուիրելով սրան որ ստիպէ մեծատանց դռները և բռնադատէ ժամանակը։

Անցորդ, թէ ուզում ես նորան տեսնել, մտեցիր այն փոքրիկ լուսամուտին, ցածր է. նայէ ներս, ահաւասիկ նա՝ ինչպէս սկզբում նկարագրեցի։ Ահաւասիկ նա երիտասարդ և արդէն մտածութեան խորշը ճակատի վրա պառկած։

Ուզո՞ւմ ես իմանալ թէ ինչպէս է ապրում. թող այդ աղքատին փողոցը և այդ խաւար տունը, և գնա՛ այն ճոխ փողոցի վրա՝ այն փայլուն տան մէջ՝ հարցուր ողորմածիկ Վաշխառուին որ ամիսը տասնին մէկ տոկոս է առնում. կամ գնա, թէ լսել ես իւր անունը, այն ծածուկ Բարեգործի մօտ, նա կասէ քեզ նրա ապրուստի գաղտնիքը։

Ա. Մ. Ե. Գ.